ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«07» սեպտեմբերի 2016 թվականի № 110-Ա

## ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԺ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) Թեժ գծով դիմում-բողոքների քննարկման աշխատանքների արդյունավետության բարձրացման և հասարակայնության հետ կապերի ամրապնդման նպատակով

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Նախարարությունում ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.
Աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության պետ,
Աշխատակազմի ընդերքի պետական տեսչության պետ,
Ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի իրավաբանական և վերահսկողության վարչության վերահսկողության և վերլուծության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ:

2. Թեժ գծի պատասխանատու, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝
վարել վիճակագրություն Թեժ գծով ստացված դիմում-բողոքների բնույթի, թվաքանակի վերաբերյալ և յուրաքանչյուր ամիս հաշվետվություն ներկայացնել աշխատակազմի ղեկավարին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ